№ 57 Հինգշաբթի Մայիսի 19 1888 Հինգշաբթի Մայիսի 19 № 57

ՏԱՍՆ ԵՒ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։ Առանձին համարները 7 կոպէկով։

Թիֆլիսում դրվում են միմիայն խմբագրատանը մէջ։

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ». կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Առողջապահական հարցեր· Քամոյենց եկեղեցու երեցփոխ Գէորգ Աքիմեանցի հաշիւը· Բժշկապետ Ելիսէեվի յօդուածը· Նամակ Իգդիրից· Ներքին լուրեր·—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ· Տեղեկութիւններ Թիւրքաց Հայաստանից· Կանայք Ամերիկայում· Արտաքին լուրեր·—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ·—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ·—ԲՕՐՍԱ·—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ·

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ամարային տաք եղանակների մօտենալը ակամայ ուշադրութիւն է դարձնել տալիս այն հակառողջական դրութեան վրա, որով շրջապատված է մեր քաղաքային ազդաբնակութիւնը, և այդ էլ ոչ թէ միայն կեղտոտութեան և անմաքուր օդի պատճառով, որի մասին շատ անգամ առիթ է եղել խօսելու, այլ և այն անպէտք, անառողջ և վատ ուտելիքի պատճառով, որը ընդունում է քաղաքային ազդաբնակութեան մի նշանաւոր մասը։ Եթէ մեր բժշկական ընկերութիւնները հրատարակէին այդ մասին ստատիստիական տեղեկութիւններ, և կամ եթէ մեր բժիշկները մի փոքր աւելի պարտաճանաչ լինելով՝ հասարակութեանը տեղեկութիւններ տային այս կամ այն հիւանդութիւնների պատճառների վերաբերմամբ, այն ժամանակ աւելի համոզիչ կերպով կարելի էր ցոյց տալ, թէ որքան շատ է նպաստում զանազան տեսակ տարափոխիկ և ոչ-տարափոխիկ հիւանդութիւնների տարածվելուն այն վատ և անպէտք կերակուրը, որը առաջարկում են քաղաքային թէ զանազան ճաշարանները, բէստորանները և հիւրանոցները, և թէ շուկայի մթերքավաճառները։

Քաղաքի ազդաբնակութիւնը գանգատվում է, որ շուկայում վաճառվում են փչացած, հին և անպէտք մթերքներ և ուտելեղէններ. և մեր քաղաքի անհոգ առողջական յանձնաժողովը անգամ առիթ է ունենում զանազան խանութներում գտնելու հին և փտած ուտելեղէններ՝ միս, հաց, և ուրիշ մթերքներ, որոնք և ոչնչացվում են։ Բայց նոյն իսկ այդ հին և փտած մթերքներն են մեծ մասամբ գործ դնվում քաղաքի զանազան հիւրանոցներում, բէստորաններում և ճաշարաններում, որտեղ ոչինչ կօնտրոլ չը կայ, որտեղ ոչինչ հսկողութիւն չը կայ, և որտեղ ամեն տեսակ անպէտք բան առաջարկվում է յաճախորդներին իբրև կերակուր, իբրև սնունդ։

Իսկ այդ յաճախորդները շատ բազմաթիւ են. այս բոպէիս էլ քաղաքի բոլոր հիւրանոցները լի են կենդանիներով, որոնք մեծ մասամբ ի հարկէ եկուորներ են, իսկ դաւառներից եկած ամեն տեսակ պարապմունքի և ամեն տեսակ շրջանի մարդիկ ճաշում են այն բէստորաններում և հիւրանոցներում, ուր ամեն տեսակ բան կայ, բացի պիտանի մնունդից։ Քաղաքային ուսումնարանների աշակերտների մեծ մասը, որոնք օտար տեղերից են եկել, ճաշում են զանազան բէստորաններում. դաւառացի աշակերտների մի մասն է միայն ապրում ընտանիքներում, թէև պէտք է նկատած, որ այդ աշակերտներ պահող ընտանիքներն էլ շատ անգամ իրանց տուած վատ բնակարաններով և վատ մնունդով մեծ օգուտ չեն տալիս աշակերտներին, որոնցից վերցնում են ամսական 25—30—35 ռուբլի։

Այդ աշակերտների մի նշանաւոր մասը ճաշում է զանազան բէստորաններում, և ստանում է այնպիսի մնունդ, որը մի երկու տարվայ ընթացքում առաջ է բերում ամեն տեսակ ներքին հիւանդութիւններ։ Ուշադրութեամբ հետևեցէք այդ աշակերտների առողջութեանը, և հեշտ կը լինի համոզվել թէ որքան ընկած դրութեան մէջ է այդ նոր սերունդը առողջութեան կողմից։ Իսկ քաղաքային զանազան հիւրանոցներում ապրելը, որ ահագին ծախսեր է պահանջում, ոչ թէ միայն մի առանձին յարմարութիւն չէ ներկայացնում, այլ նոյն իսկ նոյն դժբաղդ հետևանքին է հասցնում կերակուրի կողմից, նպաստելով զանազան հիւանդութիւնների տարածվելուն, հիւանդութիւններ, որոնք արագ քայլերով առաջ են գնում քաղաքային ազդաբնակութեան մէջ։

Մի կողմից հետևել շուկաներում վաճառվող մթերքներին, միւս կողմից հսկել զանազան ճաշարանների և հիւրանոցների մատակարարած ուտելեղէնների վրա՝ ի հարկէ կարևոր է, և դրանով մասամբ կարելի կը լինի սահման դնել այն կեղծումներին, որոնք մուտք են գործել մեր քաղաքներում գործածվող ամեն տեսակ ուտելեղէնների մէջ։ Բայց, տարաբաղդաբար, դրանով նպատակին չէ կարելի հասնել։

Շատ տեղերում հիմնվում են ընկերութիւններ, որոնց նպատակն է լինում յատկապէս էժան գնով կերակուր տալ զանազան շրջանի մարդկանց, դիցուք ուսանողներին, աշակերտներին, ծառայողներին, և այլն։ Այդպիսի ընկերութիւնները որ և է նիւթական շահ ստանալու ցանկութիւն չեն ունենում, և մինչև mimimum-ի են հասցնում ճաշի վճարը, այնպէս որ ընկերութիւն ճաշարանը ոչ մի կօպէկ արդիւնք չէ տալիս, մի և նոյն ժամանակ ի հարկէ և վնաս չը բերելով։ Շատ տեղ այդ նպատակի հետ միացվում է և խոհարարական ուսումը, և մի կողմից ուսուցանելով ցանկացողներին, զանազան օրիորդներին և կանանց կերակուր պատրաստելը, տնտեսութիւնը և այլն, մի և նոյն ժամանակ պատրաստած ուտելեղէնները և կերակուրը վաճառվում են՝ իբրև մի օրինակելի ճաշարանից։

Այդպիսի հիմնարկութիւններ, յայտնի է ամենքին, որ մեր քաղաքներում չը կան. անկասկած ապագայում դրանց նմանները կը հիմնվեն և մեզ մօտ,—բայց միթէ նոյն իսկ այժմ կանոնաւոր հսկողութեամբ չէր կարելի մի փոքր կարգի բերել քաղաքային հիւրանոցները և ճաշարանները։ Ի հարկէ կարելի է. և այդ պէտք է անել, որքան կարելի է շուտ, որովհետև դա մեծ կապ ունի քաղաքային ազդաբնակութեան առողջապահական կեցութեան հետ, քանի որ վատ սնունդը, որը մատակարարվում է քաղաքային բնակիչների մի նշանաւոր մասին, շատ զգալի կերպով է վնասում առողջապահական դրութեանը, ամեն րոպէ ծնեցնելով նոր հիւանդութիւններ, և նպաստելով արդէն գոյութիւն ունեցող հիւանդութիւնների աւելի արմատանալուն և աւելի տարածվելուն։

*

ՔԱՄՈՅԵՆՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՐԵՑՓՈԽ ԳԷՈՐԳ ԱՔԻՄԵԱՆՑԻ ՀԱՇԻՒԸ

«Արձագանք» շաբաթաթերթի № 18-ի մէջ Քամոյենց եկեղեցու երեցփոխ Գէորգ Աքիմեանց տպագրեց 6 տարվայ ընթացքում իր վարած երեցփոխանութեան հաշիւը։

Այդ տեսակ հաշիւների մասին, առհասարակ, երբէք ոչինչ չէ կարելի ասել։ Աքիմեանց մերժեց կանոնաւոր հաշիւ տալ ժողովրդից ընտրված հաշուատեսներին, իսկ լրագրում տպում է իր հաշիւը՝ ցոյց տալով եկեղեցու վեց տարվայ ունեցած մուտքը և ծախսը։

Բայց ինչ բան է այդ հաշիւը։ Կրկնում ենք այդ տեսակ հաշիւները երբէք ոչինչ նշանակութիւն չունեն, որովհետև կամ պէտք է անպայման և առանց քննադատութեան ընդունել ցոյց տուած մուտքի և ծախսի թուանշանների ճշդութիւնը, առանց միջոց ունենալու այդ թուանշանները վերաստուգելու և համեմատելու ժապաւինեալ մատեանների մէջ արձանագրված մուտքի և ծախսի իւրաքանչիւր յօդուածի հետ, առանց միջոց ունենալու վերաստուգելու համապատասխան դոկումենտների հետ,—կամ եթէ կամենայինք ճշդութեամբ վերաստուգել այդ տեսակ հաշիւները, պէտք է պահանջէինք բոլոր մատեանները ու դոկումենտները։

Եւ ճշմարիտ, մենք կարդում ենք հաշուի մէջ, որ 6 տարվայ ընթացքում եկեղեցու մուտքը եղել է մօտ 48 հազար ռուբլի, իսկ ծախսը նոյն ժամանակամիջոցում եղել է 21 հազար ռուբլի, ուրեմն առաձեռն դրամ մնացել է մօտ 27 հազար ռուբլի։

Շատ լաւ. յիսոյ ինչ.... ոչինչ։ Պէտք է հաւատանք որ այսպէս է, քանի որ չենք կարող վերաստուգել թէ մուտքի և թէ ծախսի բոլոր յօդուածները մի առ մի։

Օրինակ, կարդում ենք. հնպաստ ծխական ուսումնարանին եկեղեցւոյ, բնակարան, ռոճիկ ուսուցչաց՝ 5,937 ր. 55 կ.։ Շատ գեղեցիկ, հաւատում ենք, բայց հարցը դրանումն է, որ լրագրութեան միջոցով հասարակութեանը և ոչ թէ հասարակութիւնից ընտրված հաշուատեսներին այդ տեսակ հաշիւների տալը ոչինչ միտք չունի։ Եւ ճշմարիտ մեզ հաւատացնում են, որ մօտ 6,000 ռուբլի 6 տարվայ ընթացքում ծախսվել է Քամոյենց եկեղեցու հաշուով պահվող Հալաբարի դպրոցի վրա, և այդ ծախսի մէջ պարունակվում է թէ բնակարանի վարձը, թէ դպրոցին տուած նպաստը, թէ ուսուցիչների ռոճիկը,—բայց հաշուի ճշդութեան մէջ համոզվելու համար պէտք է նայենք մատեանները, պէտք է ցոյց տան մեզ որտեղ են ստորագրել ուսուցիչները իրանց ռոճկի ստացման մասին, պէտք է ձեռքումն ունենանք բնակարանի տիրոջ ստացականը, որ նա բնակարանի վարձը ստացել է և ինչ չափով վեց տարվայ ընթացքում, պէտք է ձեռքումն ունենանք այն բոլոր դոկումենտները, որ ռուսերէն անուանում են «արդարացնող» դոկումենտներ (оправдательные документы)։ Այդպէս են անում ամեն հաշուատեսները, վերաքննող յանձնաժողովները և որովհետև մամուլի միջոցով այդ չէ կարելի անել, ուրեմն պէտք է հաշիւը ներկայացնել հաշուատեսներին և ոչ թէ «Արձագանքի» ընթերցողներին։

Վերցնենք ծախսի ուրիշ յօդուածներ. «Նորոգութիւն կալուածոց 613 ր. 38 կոպէկ», «Նորոգութիւն և պատրաստութիւն զարդից և անօթից եկեղեցւոյ, 434 ր. 25 կոպէկ»։ Շատ գեղեցիկ, հաւատում ենք, որ թէ կալուածների և թէ եկեղեցու վրա աւելի էլ չէ ծախսվել 6 տարվայ ընթացքում, որովհետև ինքներս տեսնում ենք, որ Աքիմեանցի երեցփոխանութեան օրով թէ եկեղեցին և թէ եկեղեցու կալուածները մնացել են առանց բէմօնտի, ողորմելի, խարխուլ, քայքայված դրութեան մէջ։ Բայց ինչ և իցէ, ինչքան էլ փոքր լինի ծախսած գումարը, հօ լոկ հաւատ ընծայելով, առանց ծախսը վերաստուգելու չէ կարելի նայել հաշիւները։ Ցոյց տուեցէք մեզ որմնադրի, հիւսնի ստացականները, ցոյց տուեցէք մեզ եկեղեցու համար զարդեր և անօթներ վաճառած խանութների ստացականները։ Այդ բոլորը հօ ձեզ մօտ պէտք է լինի.... բայց որովհետև դուք մեզ, բոլոր ընթերցողներին, չէք կարող ցոյց տալ, դուք պէտք է այդ դոկումենտները ցոյց տայիք հաշուատեսներին։ Եւ. եթէ բոլորն ունէք, ինչի չէք ցոյց տուել հաշուատեսներին։

Դա ինչ նորութիւն է վերջապէս. հաշուատեսներին չը ցոյց տալ հաշիւը, դոկումենտներով հանդերձ, արժանաւորութիւնից ստոր բան համարել հաշուատեսներին հաշիւ տալը, աղաղակել թէ հաշիւ պահանջել՝ նշանակում է դիպչել երեցփոխի ազնուութեանը, նշանակում է կասկածել նրա ազնուութեան մասին, իսկ լրագրի էջերում հաշիւ տալ (առանց դոկումենտների),—այդ ստորանալ չէ նշանակում, այդ գործողութիւնը չէ չօշափում Աքիմեանցի ազնուութիւնը։

Եթէ «Արձագանքի» խմբագիրը կարծում էր թէ Աքիմեանցից հաշիւ պահանջել՝ նշանակում է նրա պատիւը վիրաւորել, նրան թերահաւատութեամբ վերաբերվել, չօշափել նրա ազնուութիւնը, ապերախտ լինել դէպի նրա մատուցած ծառայութիւնը,—ինչի ինքն հաշիւ է պահանջել նրանից ու տպում է նրա հաշիւը իր լրագրի էջերում (այն էլ առանց դոկումենտների)։ Եթէ Աքիմեանցի համար վիրաւորիչ է հաշիւ տալը ժողովրդից ընտրված հաշուատեսներին, նոյնքան վիրաւորիչ կարող է լինել նրա պատուի համար «Արձագանքի» ընթերցողներին հաշիւ տալը.... Աւելի էլ վիրաւորիչ, քանի որ «Արձագանքի» էջերում նա հաշիւ է տալիս չարդարացնելով, չը հաստատելով մուտքի և ծախսի իւրաքանչիւր յօդուածը համապատասխան դոկումենտներով, այլ մերկապարան, անապացոյց կերպով։

Ազգին, ժողովրդից ընտրվածներին, ծուխից ընտրված հաշուատեսներին կատարեալ հաշիւ տալը երեցփոխի համար անպատուութիւն է, իսկ «Արձագանքի» բաժանորդներին, այն էլ անապացոյց, անհիմն, դոկումենտներից զուրկ հաշիւ տալը,—պատիւ է նոյն երեցփոխի համար։

Կեցցէ մեր ինտելիգենցիայի և հասարակաց կարծիքը ղեկավարող հրապարակախօսների լոգիկան։ Եւ դեռ այդ տեսակները յանդգնութիւն ունեն վիրաւորվել, երբ նրանց ասում էք թէ նրանք ոչ թէ ղեկավարում են, այլ մոլորեցնում են հասարակաց կարծիքը, անբարոյականացնում են ժողովուրդը։

ԲԺՇԿԱՊԵՏ ԵԼԻՍԷԵՎԻ ՅՕԴՈՒԱԾԸ

«Историческій Вѣстникъ» ռուսաց ամսագրի ներկայ թիւ ապրիլ ամսի տետրակում հրատարակվեցաւ յայտնի ռուս ճանապարհորդ, բժշկապետ Ա. Ելիսէեվի հետաքրքիր յօդուածը «Значеніе Малой Азіи для Россіи» (Փոքր-Ասիայի նշանակութիւնը Ռուսաստանի համար) վերնագրով։

Հեղինակը սկսում է իր յօդուածը ասելով որ Փոքր-Ասիան այն երկիրն է, որ թէ իր դիրքով, թէ իր ազդաբնակութեամբ, թէ վերջապէս Ռուսաստանին հարևան երկիր լինելով, բոլոր միւս հարևան երկիրներից ամենից շատ պէտք է հետաքրքրէ ռուսներին։ Օտարները՝ անգլիացիք, գերմանացիք, ֆրանսիացիք, ասում է հեղինակը, աւելի լաւ են ուսումնասիրել և աւելի լաւ են ճանաչում այդ երկիրը, քան թէ մենք։

Այնուհետև մեր ճանապարհորդը ջանք է անում ծանօթացնել ռուս հասարակութեանը այդ երկրի վերաբերմամբ այն բոլոր տեղեկութիւնների հետ, որ ինքն կարողացել է հաւաքել թէ անձամբ իր ճանապարհորդութեան ժամանակ և թէ ուրիշ ճանապարհորդների հաղորդածներից։

Առհասարակ Ելիսէեվի ամբողջ յօդուածը ուշադրութեան և ուսումնասիրութեան արժանի է, բայց մեզ զլխաւորապէս հետաքրքրում է ռուս ճանապարհորդի կարծիքը Փոքր-Ասիայում և Հայաստանում բնակվող այլ և այլ ազգութիւնների մասին։

Ելիսէեվ ասում է, որ Փոքր-Ասիայի և Հայաստանի ապագան, եթէ ոչ քաղաքական, գոնէ քաղաքակրթական տեսակէտից, պատկանում է այդ երկրի միայն երեք ազգութիւններին, այն է հայերին, յոյներին և արաբներին։ Միւս ազգութիւններին ու ցեղերին, ինչպէս թուրքերը, քուրդերը և այլն, Ելիսէեվի կարծիքով, ոչինչ ապագայ չէ սպասում։ Վերև յիշված երեք ազգութիւններից ոչը յաղթող կը հանդիսանայ միւս երկուսի վրա,—այդ դժուար հարցը Ելիսէեվ յանձն չէ առնում վճռելու և արդեօք նրանցից մէկը առհասարակ յաղթող կը հանդիսանայ միւսների վրա, թէ երեքն էլ միասին և միաժամանակ կը բաժանեն իրանց մէջ քաղաքակրթական դերը այդ երկրում... Սակայն հեղինակը վկայում է որ հայերը արդէն այժմեանից հանդիսանում են Հայաստանում և Անատոլիայում քաղաքակրթութեան կարապետներ, հանդիսանում են «եւրոպացիք Ասիայում»։

Այնուհետև Ելիսէեվ յիշում է որ բողոքական

միսիոնարները, հիմնելով Հայաստանում, Կիլիկիայում, Սիրիայում և Պալէստինայում բազմաթիւ թէ ժողովրդական և թէ միջնակարգ կենտրոնական դպրոցներ, թէ վերջապէս բարձրագոյն դըպրոցներ (ինչպէս բժշկական դպրոցը Այնթապում) քիչ չեն նպաստում քաղաքակրթութեան լոյսը սփռելուն Փոքր-Ասիայի բոլոր երկիրներում։ Դըրանք լոյսի կայծեր են, ասում է հեղինակը, որոնք դառնալու են ժամանակով մի պայծառ արշալոյս, որով կը լուսաւորվի արևելքը։

Իր յօդուածի վերջում հեղինակը խօսում Փոքր-Ասիայի և Հայաստանի նշանակութեան մասին թէ Եւրոպայի և թէ մանաւանդ Ռուսաստանի համար։

ՆԱՄԱԿ ԻԳԴԻՐԻՑ

—

Մայիսի 8-ին

Լրագիրները մեզ ևս հասցրին Բաֆֆիի մահվան գոյժը. թէ որքան ցաւ է զգում հայ հասարակութիւնը այդ պատկառելի գրողին կորցնելով, սրան ապացոյց կարող են լինել հարիւրաւոր հասարակութիւններից ու հաստատութիւններից ստացված հեռագիրներն ու պսակները։ Բայց դեռ որքան տեղեր կան, ուր չը գիտեն Բաֆֆիի մահը... Իգդիրում այդ մահը իմացվեցաւ մայիսի 3-ին, այնպէս որ նա զրկվեցաւ յուղարկաւորութեան ժամանակ յատուկ պատգամաւոր և պսակ ունենալուց։

Ամեն մի գիւղ, ուր կարդացվել է «Խենթ», «Կայծեր» և այլ գրքերը, Բաֆֆի այնտեղ համակրողների ստուար բազմութիւն է ունեցել. ամեն տեղ լսելով նրա մահվան բօթը, ցաւում և ափսոսում են, ինչպէս իրանց ամենամօտ և սիրելի ազգականին կորցրած լինեն։ Բաֆֆիի մահից յետոյ հայ հասարակութիւնը աշխատում է անմահացնել նրա յիշատակը, նրա բոլոր տպված և անտիպ գրքերը հրատարակելու համար առանձին յանձնաժողով կազմելով և արձան կանգնեցնելով հանգուցեալի գերեզմանի վրա։ Որքան ուրախալի երևոյթներ են սոքա. այս պարզ ապացոյց է, որ բարոյականութիւնից զուրկ ժողովուրդը «Մշակի» անաչառ մտրակների տակ կրթվել, առաջադիմել և գիտակցութեան է հասել....

Երևանից պ. Ս. Տ. Մ. ապրիլի 26-ի իր նամակի մէջ առաջարկում է երևանցիներին Բաֆֆիի անունով մի որդեգիր պահել. ես, իբրև երևանցի, թոյլ եմ տալիս ինձ նկատել, որ մի որդեգիր պահելը թէև լաւ, բայց մեծ բան չէ. աւելի լաւ կը լինի, որ մի քանի անդամ մամուլի միջոցով արծարծված հարցը իրագործվի—Երևանում բացվի ժողովրդական գրադարան Բաֆֆիի անունով, որի համար մեծ պահանջ է զգացվում Երևանում։ Թող այդ գրադարանի միջոցով Երևանի հասարակութիւնը լաւ ծանօթանայ «Կայծերի», «Դաւիթ-բէկի», «Ոսկէ աքաղաղի» և միւս գրքերի ու սոցա հեղինակի հետ։

Գալով Իգդիրին, այսքան կասեմ, որ նա մայիսի 3-ին դպրոցի հասարակութեան կողմից հեռագիր յղեց «Մշակի» խմբագրին, խնդրելով իր խորին վիշտն ու ցաւակցութիւնը յայտնել իր տաղանդաւոր բանաստեղծ-վիպասանի այրիին. իսկ այսօր, ամսիս 8-ին, տեղիս Ս. Սահակ եկեղեցում կատարվեց պատարագ, եկեղեցու բակումն էլ կատարվեց հոգեհանգիստ։ Բաֆֆիի մեծադիր պատկերը թարմ ծաղիկներից պատրաստված պսակի, վարդերի ու կանաչ տերևների մէջ մի առանձին շուք էր ստացել. ներկայ էր ճառայող դասը, դաւառապետով և իր օգնականով հանդերձ։ Հասարակութեան ստուար բազմութեան մէջ նկատվում էին նոյնպէս բազմաթիւ տիկնայք և օրիորդներ։ Երկու ուսուցիչները խօսեցին՝ առաջինը բերանացի, իսկ երկրորդը գրաւոր, բացատրելով Բաֆֆիի արժանաւորութիւնը և նշանակութիւնը հայ-հասարակութեան և հայ գրականութեան համար։

Մի քանի երիտասարդներ մտածում են հանգանակութիւն բանալ հանգուցեալի գրքերի հրատարակութեան համար կազմվելի յանձնաժողովին դրամական օգնութիւն հասցնելու։ Իսկ եթէ իգդիրցիք կը կամենան իրանց մասնաւոր շըրջանումն էլ վառ պահել Բաֆֆիի յիշատակը, թող ապահովին իրանց երկսեռ դպրոցը և նոբաբաց գրադարանին Բաֆֆիի անունը տան։ Այս էլ մեծ գործ է, եթէ անենք։

Բ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Աստրախան քաղաքում հրատարակվող «Астраханскій Листокъ» ռուս լրագրի № 95-ի մէջ այս օրերս տպվեցաւ մի շատ համակրական յօդուած Բաֆֆիի մասին «Памяти Раффи» վերնագրով և Ա. Փ. տառերի ստորագրութեամբ։

—

Շարունակում ենք Անդրկովկասի այլ և այլ հայաբնակ տեղերից նամակներ ստանալ, որոնց մէջ մեզ հաղորդում են թէ ամեն տեղ Բաֆֆիի յիշատակին հոգեհանգիստներ են կատարվում։

—

Մեզ գրում են Ղարաբաղից որ այս տարի այդ քաղաքում բաւական տարածված է մանուկների շրջանում «ծակիկ» ասված հիւանդութիւնը, որը բաւական զոհեր է տանում մանաւանդ Թուրքերի մանուկներից։ Հայ երեխաներից համեմատելով քիչ են մեռնում, իսկ Թուրք ընտանիքներում, կարելի է ասել՝ 6 մանուկներից 4 են մեռնում։ Ղարայի հասակաւոր ազգաբնակութեան մէջ բաւական տարածված էր այս գարնան տիֆ ասված հիւանդութիւնը, որը նոյնպէս բազմաթիւ զոհեր տարաւ թէ հայ և թէ մանաւանդ Թուրք ազգաբնակութիւնից։

—

Մօտ երկու շաբաթ շարունակ ԹԻՖԼԻՍՈՒՄ անձրևներ էին տեղում։ Եղանակը կատարելապէս աշնանային էր։ Մինչև մայիսի 16-ին եղանակը պարզվեց։ Հետևեալ օրը նորից սկսեց անձրև գալ։

—

Մեզ ուղարկված է հետևեալ տեղեկութիւնը Կ. Պոլսից։ «Կրօնական և քաղաքական ժողովներ որոշեցին առաջարկել կառավարութեան, որ խառնը յանձնաժողով մը կազմուի Բ. Դուռնէն ընտրուած թիւրքերէ և Պատրիարքարանէն ընտրուած հայերէ, և պաշտօն ունենայ քննել հրապարակ եղած կարևոր գործերը։ Այսօր, մայիսի 7-ին կը գրուի և կը խրկուի կառավարութեան։ Հետևանքի մասին կը հաղորդուի ձեզ։»

—

Մեզ գրում են ՎԵՐԻՆ-ԱԳՈՒԼԻՍԻՑ, որ մեր լրագրում հաղորդած լուրը Ագուլիսում տարածված դիֆտերիտի մասին չափազանցրած է. վերջին 4—5 ամսվայ ընթացքում այդ ցաւին զոհ են գնացել ընդամենը չորս երեխաներ, այժմ էլ այդ ցաւով բռնվածներ շատ քիչ կան։

—

Մեզ գրում են Երևանից, որ Էջմիածնի դաւառի Օշական և Աշտարակ գիւղերում կատաղած գայլը կծել է 7 հոգու (5 կին և մի աղջիկ առաջին գիւղում և 1 տղամարդ երկրորդում)։ Գայլը սպանված է հրացանի դնտակով և բահով այն ժամանակ, երբ նա յարձակվելիս է եղել Աշտարակի այգիներից մէկում երկու գիւղացիների վրա։ Վիրաւորվածներին նահանգապետը առաջարկել է ուղարկել Օդէսա, այդ քաղաքում յատկապէս շներից և գայլերից կծվածների համար հիմնված հիւանդանոցում բժշկվելու, բայց ինչպէս լսվում է, ոչ հասարակութիւնն է ուզում փող տալ հիւանդներին ուղարկելու համար, ոչ էլ հիւանդների ազգականները։

—

Մի քանի արհեստաւորներ ուղարկել են մեզ հետևեալը, խնդրելով տպագրել. «Ինչպէս ամեն տարի, այնպէս էլ այս տարի մայիս ամսին, գրեթէ բոլոր արհեստաւորները խանութէ խանութ շրջելով իրանց մէջ փողեր են ժողովում այսպէս անուանված «մատաղի» համար։ Այդ փողերը, որ մեր չքաւոր արհեստաւորները գրեթէ իրանց մարմնից են կտրում, գործ են դնում ոչխար, զանազան ուտելեղէններ և առատ խմիչք առնելու վրա, և զուռնայի հետ դնալով քաղաքից դուրս գտնվող այգիներից մէկը, այնտեղ իրանց տալիս են զուարճութեան և քէֆի, որը շատ անդամ վերջանում է կռուով և ծեծով, և որի շնորհով բացի մի քանի ռուբլի փող մսխելուց, մի քանի օր էլ մնում են անգործ, այնպէս որ այդ քէֆը ամեն մի արհեստաւորի վրա նստում է շատ թանգ։ Խմբովին ուրախանալ վատ բան չէ, բայց մեր արհեստաւորները չը պէտք է մոռանան, որ քէֆ անելը իրանց համար սովորական է ամբողջ տարվայ ընթացքում։ Եւ այդպէս անելով նրանք համոզված են, որ մի աստուածահաճոյ բան են անում։ Արդեօք աւելի աստուածահաճոյ բան չէր լինի, եթէ նրանք այդ փողերը գործ դնէին բարեգործական նպատակով,—իսկ այդ բարեգործութիւնը այն կը լինի, եթէ նրանք այդ փողերով ծածկեն իրանց թշուառ ընտանիքների մերկ մարմինը, և մտածեն իրանց ընտանիքների համեստ զուարճութեան վրա ևս»։

—

ՍՈՒԽՈՒՄԻՑ մեզ գրում են, որ մայիսի 14-ին, առաւօտեան 10 ժամ 7 րոպէ, զգալի եղաւ երկրաշարժի սաստիկ հարուած, որը տեւեց 15 վայրկեան։

—

Ահա չորրորդ օրն է, որ շարունակվում են Թիֆլիսի աղնուականների բանկի ընդհանուր ժողովի նիստերը։ Երկու օրվայ երկար վիճաբանութիւններից յետոյ հաստատվեցաւ բանկի տարեկան հաշիւը և վարչութեան զեկուցումը, որով նոյնպէս հաստատվում է բանկին պատկանող կալուածների վրա արած ծախսը։ Ինչպէս հաղորդել ենք, անցեալ տարի ընդհանուր ժողովը թոյլ էր տուել ծախսել 30 հազար ռուբլի, իսկ վարչութիւնը ծախսել է մօտ 134 հազար։ Նիստերում վճռվեցաւ տալ առաջիկայ տարին օժանդակութիւններ՝ 1,000 ռուբլի վրաց դրամատիկական ընկերութեան, 1,000 ռ. Թիֆլիսի գաւառում գտնվող ՑինամՃղվարովի երկրագործական ուսումնարանին և 600 ռուբլի վրացերէն լեզուով հրատարակվող «Մէուրնէ» գիւղատնտեսական շաբաթաթերթին։ Ընդունվեց վարչութեան առաջարկութիւնը՝ բանկի մէջ եղող ծառայողներին շարունակել ռոճիկներ տալ հիւանդութեան ժամանակ։ Պրինցիպով վճռվեցաւ ընդունել Քութայիսի աղնուականների բանկի առաջարկութիւնը՝ միացնել երկու բանկերը, իսկ թէ ինչ հիմունքների վրա պէտք է կայացնել միութիւնը, այդ մասին յանձնվեցաւ վարչութեան և վերահսկող մասնաժողովին, կազմել մի յանձնաժողով երեք անդամներից բաղկացած, որը պէտք է որոշի այդ միութեան հիմունքները։

—

Լրագիրներում կարդում ենք, որ կոմս Լորիս-Մելիքովի, որը այս ամեռը Նիցցայում անցկացրեց, ուղևորվելու է այս օրերս Շվէյցարիա, իսկ մի քանի ամսից յետոյ գալու է կարճ ժամանակով Պետերբուրգ։

—

ԹԻՖԼԻՍԻ նահանգական վարչութիւնը տեղափոխվել է Երևանեան հրապարակի վրա գտնվող Տէր-Աստուրովի տունից և զետեղվում է այժմ Լազարատօրնայա և Երմոլովսկայա փողոցների անկիւնում գտնվող իշխան Էրիստովի տանը։

—

Լսում ենք որ ԹԻՖԼԻՍԻ առաջին մասնաւոր հիւանդանոցի տէրը, բժիշկ Բ. Նաւասարդեան, որը ժամանակաւորապէս Պետերբուրգ էր գնացել, այս օրերս վերադառնալու է Թիֆլիս։ Լսում ենք որ պ. Նաւասարդեան ճարտարքննութիւն տալով Պետերբուրգում, բժշկապետի աստիճան է ստացել։

—

Ինչպէս յայտնի է Թիֆլիսի նահանգական գանձատան գանձապահի օգնական Իվանով, որ գողացել էր 313 հազար ռուբլի և փախել էր, կալանաւորվեցաւ Ռիգայում։ Այդտեղ նա իջաւ «Park Hotel» կոչված հիւրանոցում բարոն Միլլերի կեղծ անունով։ Այս օրերս կալանաւորված Իվանով կը բերվի Թիֆլիս։

—

Թիֆլիսեցիներին ծանօթ ռուս դերասան Անդրէեվ-Բուրլակ մայիսի 10-ին վախճանվեցաւ Կազանում։ Հանդուցեալը դերասան լինելուց առաջ ծովային ծառայութեան մէջ էր ծառայում, մի ժամանակ էլ Վոլգա գետի վրա երթևեկող շոգենաւի նաւապետ էր։ Բուրլակ շատ գեղեցիկ ներկայացնում էր բուն ռուս ժողովրդական տիպերը։ Առհասարակ հանգուցեալը աչքի ընկնող բեմական տաղանդ ունէր։

—

Ռուսաց լրագիրները հաղորդում են, որ հրէաները մեծ բազմութեամբ շարունակում են գաղթել Ամերիկա։ Գլխաւորապէս գաղթում են Սըլուցկի և Ժիտոմիրի կողմերի հրէաները։ Այս գարնան Ժիտոմիրից գաղթել են արդէն 200 հրէայ ընտանիքներ, որոնց թւում և ունևորներ։

—

Մայիսի 16-ին, երկուշաբթի օրը, Թիֆլիսի քաղաքային դումայի նիստը չը կայացաւ, ձայնաւորների բաւական թւով նիստին չը ներկայանալու պատճառով։

—

Այսօր, մայիսի 19-ին Թիֆլիսի նահանգական դատարանում սկսվում է նախկին քննիչ Խօսրօեվի գործը, որը մեղադրվում է իր բնակարանը դիտմամբ կրակ տալու համար։ Կանչված են բազմաթիւ վկաներ։ Դահլիճի մուտքը, ինչպէս լսում ենք, տոմսակներով պէտք է լինի։

—

Ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնը, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի լրագիրները, հարկաւոր համարեց մի փոքր կերպարանափոխել այն կանոնները, որոնք անցեալ տարվայ շրջաբերականներով սահմանված են միջնակարգ դպրոցներում աշակերտներ ընդունելու մասին, ոչնչացնելով այդ կանոններից այնպիսիները, որոնք շատ դժուար իրագործելի են։ Օդեսայի ուսումնարանական շրջանին վերաբերեալ վերջին շրջաբերականով թոյլ է տրվում միջնակարգ ուսումնարանների վարչութիւններին չը պահանջել ծնողներից տեղեկութիւններ նրանց բնակարանի, հացէի, սենեակների թւի, ծառաների քանակութեան, ընտանիքի անդամների, պարապմունքի, նիւթական կարողութեան մասին, ինչպէս այդ պէտք է կատարվեր անցեալ տարվայ շրջաբերականների զօրութեամբ։ Փոփոխութիւններ են մացրված և մի քանի ուրիշ աւելի երկրորդական կէտերի վերաբերմամբ։

—

Պետերբուրգի հայոց եկեղեցու ծխականների տարեկան ընդհանուր ժողովի մասին, որը կայացել է մայիսի 8-ին, «Новости» լրագիրը հաղորդում է մի քանի մանրամասնութիւններ. «Ժողովը բացեց պ. Եզով, այն պատճառով որ խորհրդի նախագահ Ս. Ս. Աբամէլիք-Լազարեվ ներկայ չէր ժողովին։ Ընդհանուր ժողովի նախագահ ընտրվեց բժիշկ Ցարութիւնեան։ Ժողովը պէտք է ընտրէր խորհրդի երկու անդամ, նրանց կանդիդատներ, և եկեղեցու երեցփոխ։ Ամենից առաջ ժողովը յարդեց երկու մայրաքաղաքների հայոց եկեղեցիների հանգուցեալ հոգաբարձուի յիշատակը, ոտի կանգնելով։ Ժողովականների մեծամասնութեան ցանկութեամբ, քննութեան ենթարկվեց թէ եկեղեցու կալուածների և թէ ծխականների իրաւունքների հարցը ընդհանրապէս։ Տաք վիճաբանութիւններ տեղի ունեցան այն հրահանգի առթիվ, որը կազմել է հանգուցեալ հոգաբարձուն, և որը չէ որոշում ծխականների իրաւունքները։ Սկզբունքով այդ ծխականներին է պատկանում եկեղեցու մօտ կէս միլիոնի կարողութիւնը, և այդ նոյն ծխականները տարեկան ընդհանուր ժողովներում ընտրելով խորհուրդ՝ եկեղեցու գործերի կառավարութեան համար՝ իրաւունք չունեն կօնտրոլ անելու և քննադատելու այդ խորհրդի գործառնութիւնները։ Պարզվեցաւ որ այդ հրահանգը կատարեալ չէ, և այդ պատճառով հինգ անձինքներից բաղկացած մի յանձնաժողով կազմվեցաւ, որը պէտք է պատրաստէ նոր հրահանգի նախագիծ և պէտք է ներկայացնէ ընդհանուր ժողովին միւս տարի։ Դրանից յետոյ ժողովը ընտրեց խորհրդի երկու անդամ՝ բժիշկ Ցարութիւնեանին և բժիշկ Վարդանեանին, մի կանդիդատ՝ Սուլթան-Շահին, և եկեղեցու երեցփոխ՝ պ. Թաղիանոսեանին։

—

Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի եօթներորդ դասատունը փակելուց յետոյ՝ ուսուցիչներ պատրաստող այդ ուսումնարանում մանկավարժութիւնը այլ ևս չէ աւանդվում. միայն վեցերորդ դասատան աշակերտներին սովորեցնում են տրամաբանութիւն և հոգեբանութիւն, այն էլ շատ սահմանափակ ծրագրով։ Այդ երկու առարկաների վերջնական հարցաքննութեան վերաբերութեամբ մեզ հաղորդում են հետևեալը. տրամաբանութեան քննութիւնը շատ թոյլ անցաւ. երևում էր, որ աշակերտները շատ վատ են ծանօթ այդ առարկայի նոյն իսկ հիմնական կանոնների և բացատրութիւնների հետ. դրա հակառակ հոգեբանութեան քննութեան մէջ աշակերտները բաւական աջող էին. առհասարակ այդ վերջին առարկայի քննութիւնը լաւ տպաւորութիւն թողեց։

—

ՍՂՆԱԽԻՑ մեզ գրում են։ «Մայիսի 12-ին այստեղ կարկուտ եկաւ և տևեց ամբողջ 25 րոպէ։ Թէ կարկուտը և թէ անձրևները մեծ վնասներ տուեցին. անձրևից մի քանի տներ փուլ եկան։»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԹԻՒՐՔԱՑ ՀԱՅԱՍՏԱՆԻՑ

Մեր լրագրի անցեալ համարներից մէկում հաղորդեցինք, որ Թիւրքաց սուլթանի ցանկութեան համեմատ Ցարութիւն պատրիարքը պէտք է տեսնվեր քիւրդ Իսմայիլ փաշայի հետ։ Այժմ այդ տեսակցութեան առիթով Կ. Պոլսից մեզ գրում են հետեւեալը։ «Պատրիարքը արդէն տեսնվեց Իսմայիլ փաշային հետ, որ իր հին բարեկամն է. փաշան ջերմապէս յանձնարարած է պատրիարքին, որ հեռագրով հերքէ Եւրոպայում պատող լուրերը։ Պատրիարքը պատասխանած է թէ, ինքը Երուսաղէմի պատրիարք ընտրված ըլլալով, այլ ևս Պոլսոյ Պատրիարք չէ։ Ազգային Ժողովն ալ տեղապահի մը ընտրութեան հրամանն խնդրած է կառավարութիւնէ, հետևաբար, քանի որ Պոլսոյ Պատրիարք չէ, կարող չէ այդ ընել։ Ցարութիւն Պատրիարքը կրնայ ըսել այդ։ Իսմայիլ փաշա ինքն ալ պիտի աշխատի այժմ, որ Ցարութիւն Պատրիարքի հրաժարականը ընդունվի։»

Արդէն հաղորդվեցաւ, որ Վանի փոխանորդ Ա-լէքթեան եպիսկոպոս Կ. Պոլիս է տարվում։ Ինչպէս երևում է մեզ հասած տեղեկութիւններից, այնպէս է կարդաղրված, որ Ալէքթեան եպիսկոպոսը իբրև թէ ինքնաբերաբար հրաժարական է տալիս. այդ հրաժարականը պէտք է ընդունվի Պոլսի հայոց պատրիարքարանի կողմից, և Վանի փոխանորդը Կ. Պոլիս կը դայ իբրև հրաժարված։

Մայիսի 7-ից Կ. Պոլսից մեզ գրում են։ «Ճիբրալթարայի անգլիական եպիսկոպոսն այցելեց պատրիարքարան և տեսակցութիւն ունեցաւ. անգլիացի յայտնի քահանայ մը բաւական տեղեկութիւններ հաւաքեց հայոց եկեղեցու այժմեան դրութեան մասին, որ պիտի հրատարակէ Անգլիայում, անդ վերադարձած ատեն։»

Կ. Պոլսի լրագիրների մէջ կարդում ենք հետեւեալը. «Առևտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութեան հրամանաւ՝ գաւառաց երկրագործական քննիչք Պոլիս հրաւիրուած էին խորհրդակցելու համար այն միջոցներուն վրայ, որովք կարելի է նպաստել երկրագործութեան զարգացման։ Արդ, խորհրդակցութիւնք աւարտած լինելով, նոյն նախարարութեան հրամանաւ երկրագործական քննիչք իրենց պաշտօնատեղիները վերադարձած են։ Առևտրական և Հանրօգուտ շինութեանց նախարարութիւնն յանձնարարած է յիշեալ պաշտօնէից որպէս զի նոր գործունէութեամբ մը ձեռնարկեն երկրագործութեան վիճակը բարւոքելու և աշխատին քիչ ժամանակի մէջ գործնական լաւ արդիւնք մը տալու, վստահ լինելով որ այս առթիւ հարկ եղած դիւրութիւնք և օգնութիւն չը պիտի զլացուին իրենց։»

ԿԱՆԱՑՔ ԱՄԵՐԻԿԱՅՈՒՄ

Այս օրերս Ամերիկայի Վաշինգտոն քաղաքում կայացաւ կանանց կոնգրէս։ Այդ կոնգրէսին ներկայացան 600 պատգամաւոր կանայք Ֆրանսիայից, Անգլիայից, Շվեյցարիայից, Նորվեգիայից, Շվեդիայից և մինչև անգամ Ֆինլանդիայից։ Կոնգրէսում մասնակցում էին պատգամաւորներ 39 թէ ամերիկական, թէ եւրոպական և թէ հնդկական իգական ընկերակցութիւնների։ Կոնգրէսի նպատակն էր պաշտպանել կանանց իրաւունքները թէ ընտանիքում և թէ հասարակաց կեանքում։ Ընտանիքում կինը, ժողովի կարծիքով, պէտք է տղամարդու հետ հաւասար իրաւունքներ ունեցող ընկերուհի լինի, իսկ հասարակութեան մէջ նա պէտք է ձգտի ձեռք բերել ապրուստ տուող այլ և այլ արհեստներ և մասնագիտութիւններ։ «Ամերիկական միջազգային մամուլի ընկերակցութեան» քարտուղար, տիկին Բրայդ զեկուցում ներկայացրեց ժողովին, որի մէջ նկարագրում էր ամերիկացի կանանց աղդեցութիւնը Ամերիկայի մամուլի վրա։ Ամերիկական առաջին մեծ լրագիրը՝ «Մասսաչուզէտի լրագիրը» հիմնվեցաւ 1750 թուին մի կնոջ, Մարգարիտա Կրանէրի ձեռքով։ Այդ օրինակին հետևեցին միւսները և աջողութիւն ունեցան։ Զեկուցանող տիկինը ջանում էր ապացուցանել, որ կանայք կարող են լրագրական ընտիր աշխատակիցներ, բէպօրտեօրներ և թղթակիցներ լինել։ Ժողովի մի այլ պատգամաւոր տիկինը ապացուցանում էր, որ անհրաժեշտ կը լիներ թոյլ տալ ամեն երկրում, որ կանայք ադվոկատութեամբ էլ պարապէին. այն ժամանակ, ասելացրեց զեկուցանողը, ադվոկատների ոճն էլ աւելի վայելուչ կը դառնար և դատարանում անշուշտ իրանց աւելի վայելուչ կերպով կը պահէին, քան թէ տղամարդիկ։ Մի երրորդ զեկուցումից մենք իմացանք, որ կանայք Ամերիկայում մեծ դեր են խաղում այդ երկրում հիմնված «Աշխատանքի ասպետների» բանուորական ընկերակցութեան մէջ և նրանց նախաձեռնութեամբ ու պահանջմամբ նշանաւոր կերպով նուազեց թէ գործարաններում և թէ առևտրի մէջ երեխաների աշխատանքի հարստահարութիւնը Ամերիկայում։

Կոնգրէսի պատգամաւորութիւնը ներկայացաւ Միացեալ-Նահանգների հանրապետութեան նախագահ Կլէվէլէնդին, որը մեծ համակրութեամբ ընդունեց պատգամաւորութիւնը և կատարեալ աջողութիւն ցանկացաւ ժողովի գործին։

Կանանց իրաւունքների հետևեալ կոնգրէսը լինելու է Փարիզում 1892 թուին։

Այստեղ աւելորդ չենք համարում ծանօթացնել մեր ընթերցողներին այն դիրքի հետ, որ արդէն կարողացել են բռնել ամերիկուհիք իրանց հայրենիքի հասարակաց ասպարիզի այլ և այլ ճիւղերում։ Այս րոպէիս ամերիկացի կանանց թւում 2,000-ից աւելի բժիշկներ կան, մի քանի հարիւր ադվոկատ-կանայք կան, և Չիկագո քաղաքում հրատարակվող մի իրաւաբանական թերթի խմբագիրը, աշխատակիցները և հրատարակիչները՝ կանայք են։ Ամերիկայի համալսարաններում բաւական թւով պրոֆէսօրներ կան, որոնք պատկանում են կանանց սեռին, կան Ամերիկայում կանայք-աստղաբաշխներ, բազմաթիւ կանայք-գրողներ։ Միայն Նիւ-Եօրկ քաղաքում 200-ից աւելի կանայք ապրում են գրական աշխատանքով։ Երկրի ուսումնարանների մեծ մասը գտնվում է կանանց ձեռքում և Ամերիկայում ուսուցչուհիների թիւը հասնում է 200,000 հոգու։ Խոշոր և մանր բանկային, առևտրական և արդիւնագործական տներում և հիմնարկութիւնների մէջ հաշւապահ-կանանց թիւը շատ մեծ է, իսկ Վաշինգտոն քաղաքի պետական այլ և այլ հիմնարկութիւնների մէջ մինչև 3,000 կանայք վարում են աստիճանաւորների և գրագիրների պաշտօնները, ստանալով 700-ից մինչև 3,000 դոլլար տարեկան ռոճիկ։ Ամերիկայի երեք նահանգներում կանայք արդէն վայելում են տղամարդկանց հետ հաւասար քաղաքական-ընտրողական իրաւունքներ, իսկ երկու նահանգներում կանայք մասնակցում են քաղաքային ընտրութիւններում և կանգաս նահանգի Օսկալուզ քաղաքում, ամբողջ քաղաքային վարչութիւնն անդամ այս րոպէիս բաղկացած է կանանցից և քաղաքագլուխն էլ պատկանում է քնքոյշ սեռին։

Վերջապէս Ամերիկայի գրեթէ բոլոր համալսարաններում կանայք իրաւունք ունեն տղամարդկանց հետ միասին, ուսանող գրվել, ուսանել և գիտական աստիճանները ձեռք բերելու համար հարկաւոր հարցաքննութիւններ տալ։ Այդպիսով համալսարաններն էլ Ամերիկայում բաց են կանանց առաջ, ուրեմն գիտութեան ամեն տեսակ ճիւղերի ուսումնասիրութիւնն էլ մատչելի է Ամերիկայի կանանց համար։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

— Հռոմի պապը այս օրերս հրատարակել է մի համակրելի զրութիւն, որը ուղղած է Բրազիլիայի կաթոլիկ եպիսկոպոսներին, և որով շնորհաւորելով ճորտերի ազատութիւնը Բրազիլիայում, պարծանքով յայտնում է, որ այդ ազատութեան գործին նպաստել է կաթոլիկ եկեղեցին։ Պապի այդ զրութիւնը լաւ տպաւորութիւն է թողել։ Թէ որքան է նպաստել կաթոլիկ եկեղեցին ճորտերի ազատութեանը, այդ մի կողմ թողնենք. յիշենք միայն որ մի ժամանակ Բրազիլիայում կաթոլիկ հոգևորականութիւնը բռնում էր պահպանողական կուսակցութեան կողմը, և դէմ էր ճորտերի ազատութեան մտքին։ Սակայն նոր բան չէ, որ կաթոլիկ հոգևորականութիւնը շատ անգամ անցնում է ամենաազատ սկզբունքների կողմը՝ նոյն իսկ իր շահերի և իր ժողովրդականութեան տեսակէտից։

— Սոֆիայից հեռագրում են, որ այնտեղ մինիստրական ճգնաժամի նշաններ են երևում։

— Ինչպէս երևում է Պէշտից եկած հեռագիրներից, կոմս Անդրաշի հիւանդացել է։

— Հռոմի պապը յայտնել է, որ ինքը կը դիմէ պետութիւններին և կը խնդրէ ոչնչացնել ճորտութիւնը նոյնպէս և Աֆրիկայում։ Այդ լուրը կաթոլիկ միսիոնարները տարածում են Աֆրիկայում և կաթոլիկ եկեղեցու դլխաւորի անունը մեծ յարգանք է ստանում այժմ Աֆրիկայի խորքերում։

— Ֆրիդրիխ կայսրը, ինչպէս գրում են Բերլինից, այժմ առանց ուրիշների օգնութեան յաճախ անցուդարձ է անում սենեակներում և զբօսնում է դուրսը, բաց կառքով։

— Հեռագիրը արդէն լուր բերեց, որ գերմանական կառավարութիւնը մի քանի նոր խստութիւններ է սկսել գործ դնել Էլզաս-Լոթարինգիայում ֆրանսիացիների դէմ։ Այդ երևոյթը կրկնակի նշանակութիւն է ստանում, քանի որ կատարվում է Ֆրիդրիխ կայսրի օրով։ Հետաքրքիր է տեսնել թէ ինչ բացատրութիւն կը տան այդ մասին Բերլինից։

— «Bulgarin» լրագիրը հաղորդում է, որ Ցանկովի և Կարավելովի կուսակցութիւնները միացնելու գործը դեռ չարունակվում է արծարծվել։ Այդ նպատակով Ցանկով հետևեալ պայմաններն է առաջարկել. խառն Ցանկովո-Կարավելեան մինիստրութիւն, սահմանադրութեան վերաքննութիւն և նոր իշխանի ընտրութիւն, որին հաւանութիւն տար Ռուսաստանը։ Այդ ուշադրութեան արժանի լուրի առիթով, որ հրատարակել է յիշեալ լրագիրը, «Neue Freie Presse» լրագրի Սոֆիայի թղթակիցը յայտնում է, որ այդպիսի առաջարկութիւն կարավելովին չէ արված, թէև դա Ցանկովի վաղուց ցանկացած առաջարկութիւնն է։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ֆրիդրիխ կայսրի անունով անդադար ստացվում են զանազան խնդրագրեր Գերմանիայի ամեն կողմերից, և դոցա մէջ հետաքրքրութիւնից զուրկ չէ մի գիմնազիայի 2-դ դասատան աշակերտի խնդիրքը, որը դանդատվելով, թէ «նրան երկրորդ տարին ստիպեցին մի և նոյն դասատանը նստել, խնդրում է կայսրից նրան տեղափոխել միւս դասատանը, խոստանալով ջանասէր լինել»։ Այդ խնդիրքը յանձնվից ժողովրդական լուսաւորութեան մինիստրին, պատուիրելով, որ մինիստրական զեկուցում տրվի այդ մասին. տասն օրվայ ընթացքում հարկաւոր տեղեկութիւնները ձեռք բերելով, մինիստրը դիմեց գիմնազիայի դիրեկտորին, որը մի մանրամասն զեկուցման մէջ, բոլոր վարժապետների ստորագրութեամբ, այն միտքը յայտնեց, որ խնդրատու աշակերտի ուսման ապագայ աջողութեան համար ցանկալի է և օգտակար, որ նա երկրորդ տարին մնայ նոյն դասատանը։ Խնդիրքը ուղարկելուց երեք շաբաթ անց, աշակերտը դպրոցի վարչութեան միջոցով կայսրի դիւանատանից ստացաւ պատասխան, որի մէջ մանրամասնաբար պատճառաբանված է, թէ ինչու իր խնդիրքը չէ կարող յարգված լինել, և վերջումն էլ ցանկանում են նրան կատարեալ աջողութիւն իր ուսման մէջ։

* * *

«Կանքը ապահովող» գերմանական ընկերութիւնների հաշիւներից երևում է, որ դոքա 1829 թուից սկսած որբերին և այրիներին տուել են աւելի քան 700 միլիոն մարկ։

* * *

Մենք մի քանի անդամ հաղորդել ենք ընթերցողներին, թէ ինչ տարօրինակ հասցէներ են գրում ոմանք իրանց նամակների վրա, այնպէս որ փոստատունը այդ նամակները ստանալով, անկարող է լինում հասցնել իրանց տէրերին։ Այս օրերս մեզ աջողվեցաւ դարձեալ տեսնել մի ծիծաղելի հասցէ մի նամակի վրա, որը ստացված է Թիֆլիսի փոստատունը և, ի հարկէ, թողնված է փոստում, առանց տիրոջ հասցրած լինելու։ Ահա նամակի հասցէն. «Тифлисъ, г-ну Гиго Квахадзе, помощник повари».

Կարծես թէ ամենքը պէտք է իմանան թէ ով է այն խոհարարը, որի օգնականն է Գիգո Կվախաձէ։

* * *

Լրագիրներում կարդում ենք, որ դիտաւորութիւն կայ Ֆրանսիայի և Անգլիայի ափերը միացնել մի կամուրջով, որը 30 վերստ երկարութիւն կունենայ։ Կամուրջի կամարները ծովի մակերեւոյթից 50 մէտր բարձրութիւն կունենան, այնպէս որ նրանց տակով կը կարողանան մեծ շոգենաւեր անցնել։ Կամուրջը երկաթեայ կը լինի և նրա կառուցումը կը նստի 800 միլիոն ֆրանկ։ Կամուրջի պրոէկտը մշակում են Կրէզօ և Գերման ինժենէրները։

„ՄՇԱԿԻ" ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 16 մայիսի։ Երէկ երեկոյեան Կիէվ ուղևորվեց դեներալ-ադիւտանտ կոմս Իգնատիև։ «С. Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ պետական կալուածների մինիստրութիւնը կարդադրել է հիմնել Կազատին կայարանի մօտ, Բերդիչեան գաւառում, դիւղատնտեսութեան գործնական դպրոց։ Դպրոցը կը դտնվի մինիստրութեան տեսչութեան տակ, որը ամեն տարի, երեք տարվայ ընթացքում, կը տայ նրան 1,500 ռուբլի օժանդակութիւն։ Նոյն լրագրի խօսքերին նայելով, Դոնեան ծխախոտագործների մօտ գնացին շատ գերմանացի գործակալներ այն նպատակով, որ ձեռք բերեն ապագայ հունձի ծխախոտի լաւ տեսակները՝ Գերմանիա ներմուծելու համար։ «Новости» լրագիրը հաղորդում է, որ պետական խորհրդում նորերս քննվեց այն կանոնների նախագիծը, որոնց համեմատ պէտք է աճուրդով վաճառվեն այն կալուածները, որոնք դրաւ են դրած ազնուական բանկերում։

ՄՈՍԿՎԱ, 16 մայիսի։ Ոստիկանութիւնը գտաւ կապօրեան խոտի երկու պահեստ. բռնվեցան մի քանի արկղներ, որոնք պատրաստված էին ուրիշ տեղ ուղարկելու համար։

ԵՎՊԱՏՈՐԻԱ, 16 մայիսի։ Այստեղի գաւառում այնպիսի ցրտեր էին, որ ջուրը ծածկվեց սառուցով. մրգատու ծառերը և բանջարեղէնների ծիլերը շատ վնասվեցան։

ՍԱՄԱՐԿԱՆԴ, 16 մայիսի։ Երէկվանից սկսված է երթևեկութիւն թէ մարդատար և թէ ապրանքատար գնացքների Սամարկանդից մինչև Զարջոյ և մինչև Ճանապարհի միւս բաժինները։

ԲԵՐԼԻՆ, 16 մայիսի։ Թագաւորական թատրոնում, որտեղ ներկայումս վերանորոգութիւններ են լինում, այսօր առաւօտեան թափվեցան կտուրի գերանները, որոնց տակ մնացած բանող 44 բանուորներից առայժմ հանված են 26 մարդ. դրանցից հինգը ծանր վիրաւորված են։ Աշխատում են միւսներին էլ ազատել։

ԱԹԷՆՔ, 16 մայիսի։ Այստեղ յոյն և իտալացի բանուորների մէջ տեղի ունեցաւ մեծ կռիւ, որի ժամանակ աւելի քան 30 մարդ վիրաւորվեցան և սպանվեցան։

ԲԱՐՑԵԼՕՆԱ, 16 մայիսի։ Այստեղի ցուցահանդիսին եկած ռուսաց պատերազմական նաւերը, երէկ տօնելով Նոցա Կայսերական Մեծութիւնների թագադրութեան տօնը՝ թնդանօթաձգութեամբ ողջունեցին այդ տօնը. այդ ողջոյնին պատասխանեցին այստեղ եղող բոլոր օտարերկրացի պատերազմական նաւերը։

ԲԵՐԼԻՆ, 16 մայիսի։ Իշխան Բիսմարկ ընդհատեց իր հանգստութիւնը, որ վայելում էր Պոմերանիայում, իր կալուածքում, և եկաւ Բերլին երէկ երեկոյեան։

ՓԱՐԻԶ, 16 մայիսի։ Երէկ, կոմմունարների ապստամբութեան ճնշելու տարեդարձի օրը մեծ կռիւ պատահեց անարխիստների և բուլանժիստների մէջ «Pére-Lachaise» դերեզմանատանը, որի ժամանակ երկու անարխիստներ ատրճանակի հարուածներից վիրաւորվեցան։

ՄԱՐՍԷԼ, 16 մայիսի։ Այստեղ եկան Իտալիայի և Ֆրանսիայի դաշնակցութեան կողմնակիցները՝ Հռոմի «Emancipazione» լրագրի խմբագիր Ալբանի և իտալական դէմոկրատիայի ներկայացուցիչները։ Նրանց դիմաւորելիս ամբոխը գոչում էր. «կեցցէ Ֆրանսիան, կեցցէ Իտալիան»։ Ալբանի իր ճառի մէջ ասեց, որ Իտալիայի դաշնակցութիւնը Գերմանիայի հետ հակառակ է ազգային զգացմունքին, ըստ որում Իտալիան պէտք է վերադարձնէ Տրիէստը և Տրիենտը։ Նրա խօսքերը ընդունվեցան ծափահարութիւններով։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 մայիսի։ Մայիսի 20-ին Բալտեան գործարանում, բարձրադոյն ներկայութեամբ տեղի կունենայ «Полярная звѣзда» կայսերական նաւի հիմնադրութիւնը, և «Память Азова» զրահակիր նաւի ջրի մէջ իջեցնելը։ Տուրկեստանի դեներալ-նահանդապետը, հեռագրելով Անդրկասպեան երկաթուղու Սամարկանդի ճիւղ բացման մասին, յայտնում է, որ այդ բացումը տեղի ունեցաւ ռուս և տեղացի ժողովրդի անգին բազմութեան ներկայութեամբ, որը այդ խաղաղ երևոյթի մէջ տեսնում է երկրի կուլտուրական զարգացման նոր շրջանի սկիզբը և Մեծ Ինքնակալի հայրական խնամատարութեան նոր ապացոյցները՝ Միջին-Ասիայի մէջ եղող Իր ժողովրդի պէտքերի և բարեկեցութեան վերաբերմամբ։

ՕԴԷՍՍԱ, 17 մայիսի։ Երէկ յունաց թագուհին հասաւ այստեղ և այսօր ուղևորվում է Պետերբուրգ։

ԲԵՐԼԻՆ, 16 մայիսի։ «Հիւսիսային գերմանական ընդհանուր լրագիրը» Էլզաս-Լոթարինգիայում ձեռք առած միջոցները համարում է արդելութիւն միջոցներ յայտնի փաստի դէմ և հետեւանք այն քաղաքականութեան, որը ուղղված է դէպի Գերմանիայի աւելի հաստատուն լինելը վերադարձած նահանգների մէջ։ Լրագիրը ասում է, որ ի նկատի ունենալով Ֆրանսիացիների ազգային թշնամութեան ուստականալը դէպի գերմանացիները, որը Ֆրանսիական կառավարութիւնը իր սեփական այժի համար՝ աւելի աճեցնում էր, քան թէ թուլացնում, կայսերական կառավարութիւնը ենթադրում է սահմանադլխի յարաբերութիւնները խստացնելու գործով որքան կարելի է ընդհարման վտանգի առաջն առնել և այդպիսով ծառայել խաղաղութեան գործին։

ՎԻԷՆՆԱ, 17 մայիսի։ Թիւրք-բոլգարական սահմանագլխի վրա կողմվեցան բոլգարական գաղթականներից բաղմաթիւ զինուորված խմբեր, որոնք աւելի և աւելի են զօրեղանում Զերնօգօ, Ռիայի ցամաքի վրա։ Թիւրքաց իշխանութիւնները նախազգուշութեան միջոցներ են ձեռք առնում, ի նկատի ունենալով, որ այնտեղ փորձեր են լինում

կազմակերպելու ապստամբների զօրաբաժիններ։ Մինիստր-նախագահ Տիսսայի ճառերի առիթով, որով նա խօսեց Փարիզի ցուցահանդէսում Ռուսդարիայի մասնակցութեան անյարմարութիւնների մասին, Պէշտում անկախ կուսակցութիւնը պատրաստվում է ցոյցեր անելու յօգուտ Ֆրանսիայի։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 մայիսի։ Թագաւոր կայսրը շնորհակալութիւն է յայտնում Թուրկեստանի գեներալ-նահանգապետ Բօղէնբախին և Անդրկասպեան երկաթուղու կառուցանող գեներալ Աննէնկովին և Արքայական բարեհաճութիւն երկաթուղու կառուցանողի բոլոր աշխատակիցներին, Անդրկասպեան երկաթուղային 2-րդ զօրաբաժնի հրամանատարին և պաշտօնեաներին, որոնք մասնակցել են սամարկանդեան երկաթուղու կառուցման մէջ նրանց եռանդուն ծառայութեան համար։ —Ինոզոյից Բարձրագոյն հաստատված որոշման համեմատ, ամբողջ կայսրութեան մէջ ստորագրութիւն է բացվում Բէվէլում ուղղափառ նոր մայր-եկեղեցի կառուցանելու համար։ Նուիրատուութիւններ ժողովելու և տաճարի կառուցման համար առանձին մասնաժողով է կազմվում էստլանդեան նահանգապետի նախագահութեամբ։

ՎԻԵՆՆԱ, 18 մայիսի։ Պատգամաւոր Միլներ և ընկերները պատգամաւորների ժողովին հարցապնդում արեցին կառավարութեան ձեռք առնելի միջոցների մասին՝ Աւստրիան պաշտպանելու համար ռուսաց հացահատիկների առատութեամբ ներմուծվելուց։—«Politische Correspondenz» լրագրի Կ. Պօլսից ստացված տեղեկութիւնների համեմատ, Վանի արքեպիսկոպոս Յովհաննէսի (?) կեանքի դէմ փորձ փորձելու պատճառով, նա չը մեռաւ, բայց ծանր վիրաւորված է։ Ցանցաւորները դեռ ևս չեն գտնված և յանցանքի շարժառիթները չեն պարզաբանված։

—

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

Մայիսի 17-ին

Լօնդօնի վրա 10 ֆունտ արժէ. .	118 ր.	—	›
Համբուրգի վրա 100 մարկ — . .	58 ›	—	›
Փարիզի վրա 100 ֆրանկ — . .	46 ›	40	›
Ոսկի — արժէ — . .	9 ›	50	›
Մաքսային կուպօններ — . .	189 ›	—	›
Արծաթ — — — . . .	1 ›	40	›
Բօրսային դիսկօնտներ — .	$6\frac{1}{8}$%	$7\frac{1}{4}$%	›
Պետակ. բանկ. 5% տոմս 1-ին չրջանի	99 ›	12	›
— — — — 2-րդ —	98 ›	50	›
— — — — 3-րդ —	98 ›	50	›
— — — — 4-րդ —	99 ›	—	›
— — — — 5-րդ —	98 ›	50	›
— — — — 6-րդ —	— ›	—	›
Նոր 4% փոխառութիւն.	82 ›	75	›
Արևելեան 5% փոխառութ. 1-ին չրջ.	100 ›	—	›
— — 2-րդ —	98 ›	62	›
— — 3-րդ —	98 ›	62	›
Ներքին 5% առաջին փոխառութ.	272 ›	25	›
— երկրորդ —	243 ›	50	›
$5\frac{1}{2}$% բէնտա	103 ›	—	›
Ոսկեայ բէնտա.	200 ›	—	›
Եօթերորդ կօնսօլիդած փոխառութիւն.	169 ›	75	›
Նոր երկաթուղային բէնտա . . .	98 ›	87	›
5% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդ. ընկ.	170 ›	—	›
Գրաւ. թղ. Ազնս. բանկի . . .	97 ›	62	›
$5\frac{1}{2}$% գրաւական թղթեր Խերսօնի կալուած. բանկի.	99 ›	12	›
6% գրաւակ. թղ. Խարկովի կալ. բան.	101 ›	25	›
— — Պօլտավայի— —	101 ›	—	›
— —Պետ.Տուլսկ.— —	100 ›	75	›
— — Կիեվի — —	101 ›	—	›
— — Մօսկվայի — —	100 ›	75	›
— — Բեսարաբ. Տավր.—	100 ›	50	›
— — Նիժ. Սամար. —	100 ›	50	›
— — Վիլնայի —	101 ›	25	›
— — Թիֆլիսի—27 և 43 տ.	98 ›	50	›
—Քուրսկի-18 և 43 տ.	98 ›	50	›
Վոլժսկօ-Կամսկի բանկի ակցիաները	702 ›	—	›
Ռուսաց երկաթուղիների գլխաւ. ընկ.	273 ›	—	›
Ռիբինսկ-Վոլոգդի ընկ.	83 ›	25	›
Ս. Պետերբուրգի քաղաքային օբլիգացիաներ.	94 ›	87	›
Մօսկվայի քաղաք. օբլիգացիաներ .	94 ›	62	›
Օդէսայի — — .	93 ›	75	›
Թիֆլիսի քաղաք. կրեդ. ընկ. օ. .	83 ›	50	›

Ս. Պետերբուրգի բօրսայի տրամադրութիւնը ամուր է։

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԻՆՉԵՎ ՆՈՐ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆ

Ա. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ-ԱԶՈՎԵԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԲԱՆԿ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ, Նէվսկի պրօսպէկտ, տուն № 16

ՎՃԱՐՈՒՄ Է՝ հասարակ ընթացիկ հաշիվով . . . . . $3\frac{1}{2}$% տարեկան
աւանդներով մինչև պահանջ . . . . . 4% ›
› › 3 ամսով . . . . . $4\frac{1}{2}$% ›
› › 6 ամսից աւելի . . . . . 5% ›
ՎԵՐՑՆՈՒՄ Է՝ փոխառութեամբ որոշ ժամանակամիջոցով.
երաշխաւորված թղթերի գրաւականով . . . . . 7% ›
ոչ երաշխաւորված. . . . . $7\frac{1}{2}$% ›
Մասնաւոր հաշիվով (On Call) առանձին հաշուեպայմանով.

Արժէթղթերը առնելու և ծախելու յանձնարարութիւնները կատարելու համար Բանկը վերցնում է $\frac{1}{10}$% (մի տասներորդական) կոմիսիայի և սովորական կուրտաժ։

Բանկը տալիս է ակրեդիտիվներ և փոխադրութիւններ է անում Ռուսաստանի և արտասահմանի գլխաւոր տեղերը։ 1—3 (յունիս 4 և 18)

Իմ հրատարակութեամբ լոյս տեսաւ պ. Վասակ Մադաթեանցի (Նեազմի) „ՄԱՏՕՅԻ ԿՏԱԿԸ“ անունով վոդվիլը. գինն է 25 կոպ., պահեստը գտնվում է ինձ մօտ. դիմել այս հասցէով. Въ Ахалцыхъ, учителю арм. училищъ Нерсесу Симонянцу. Գումարով գնողներին զիջումն կը լինի։

Ն. Սիմէօնեանց 1—2

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԵՐ

8 րուբլի ամսական, 4 դաս շաբաթական

Փարիզում աւարտած մի հայ երիտասարդ մօտերս Թիֆլիս հասնելով, գործնական և նոր մեթոդով Ֆրանսերէն լեզուի դասեր է տալիս աշակերտների տները այցելելով։ Ցանկացողները պիտի հաճեն դիմել „Մշակի“ խմբագրատան հասցէն իմանալու համար։ 1—5

ՅՈՎՆԱՆԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐՈՑԻՑ ԱՒԱՐՏԱԾ ՄԻ ՕՐԻՈՐԴ, որ մի քանի տարի է արդէն ՎԱՐԺՈՒՀՈՒ ՊԱՇՏՕՆ Է ՎԱՐԵԼ, ցանկանում է դասեր ունենալ ընտանիքներում, թէ ԹԻՖԼԻՍՈՒՄ և թէ ԳԱՒԱՌՆԵՐՈՒՄ։ Կարող է պարապել փոքրահասակ երեխաների հետ Ֆրեօբելեան սիստեմայով ևս։ Համաձայն է նոյնպէս և ընտանիքներում ապրել՝ երեխաներին դաստիարակելու համար։ Հասցէն կարելի է իմանալ „Մշակի“ խմբագրատանը։ 1—5

„ԱՐԱՔՍԻ“ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐՔԸ, ՈՐՊԷՍ ՏՊՎՈՒՄ Է, ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԻ. ուսումնասիրութեան առթիւ, տնտեսական խորհրդածութիւններ, գաղթականութիւն, և այլն։ Խարբերդի ընդարձակ տեղեկագրութիւնը, Կիլիկիա, Եւդոկիոյ կեանք։ Եօթը կենսագրութիւններ հանդերձ լինն պատկերներով (կը մտնեն Ծերենց, Բաֆֆի)։ Ինն բանաստեղծութիւններ։ Արքայ Լիր, մի ճշգրիտ անցք, մի վէպ։ Մատենախօսութիւն։ Ազգային յիշատակարան. հանդուցեալ մի յայտնի ազգային բանաստեղծի անտիպ գրուածքներից մի քանիսը։ Թղթակցութիւններ։ Լրագրաց շուրջը։ Ա.յլ և այլք։ „Արաքսի“ բաժանորդագինն է 3 բուբլի։ Հասցէն. Петербургъ Графскій переулокъ 7. 22. Симеону *Гуламирянцу*.

Օրիորդ Ս. Վ. ԱՐՂՈՒԹԵԱՆԻ ԳԻՇԵՐՕԹԻԿ ԴՊՐՈՑԸ ամառը տեղափոխվելու է մօտիկ ամարանոցներից մէկը։ Ընդունվում են գիշերօթիկներ։ Հասցէն՝ Ֆրէյլինսկայա փողոց, № 8։ 3—4 (շ)

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ ՀՈԳԵՒՈՐ ԴՊՐՈՑԻ հոգաբարձութեան խորհրդարանում յունիս ամսի 1-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է ԱՃՈՒՐԴ (առանց կրկնաձրդի) կապալով տալու 21 կրպակներ, որոնք գտնվում են դպրոցապատկան հրապարակի վրա Վանքի եկեղեցու մօտ։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից, առաւօտեան 10-ից մինչև 12 ժամ։ 3—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԻԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ.

Հինգշաբթի, մայիսի 26-ին, ԳԱԼԼԻԱ (LA GAULE) շոգենաւը, նաւապետ ՍԵՐԵՆՕՆ (SERENON) դուրս կը գնայ Բաթումից դէպի Տրապիզոն, Օրդու, Սամսօն, Կ. Պօլիս և Մարսէյլ։ Տեղեկութիւնների մասին պէտք է դիմել ընկերութեան գործակալներին. Բաթումում Լէմլօշլուի տան, Նաբերէժնայա, և Թիֆլիսում նախկին Արծրունի դպրերէում, № 103. 4—4

1865 թ. — 1882 թ.

1865 թվականից գոյութիւն ունեցող և մեդալների ու պատուաւոր դիպլոմների արժանացած

ԱՊԱԿԵՂԷՆԻ ԲԻԻՐԵՂԻ ԵՒ ՊԱՏՈՒՀԱՆԻ ԱՊԱԿԻՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ

„ԶԵՒԻ“

ԻԳՆԱՏԻ ԳՕՐԴԼԻՉԿԱ ՖԻՐՄԱՅԻ

որի պահեստները գտնվում են ՎԱՐՇԱՎԱ, Сенаторская, № 19 и Граничная, № 6, ԼԻԻԲԼԻՆ, ԼՕԶ և ԲՐԵՍՏ-ԼԻՏՕՎՍԿ քաղաքներում։

Առաջարկում է իր պատրաստած իրեղէններ, այսինքն ամեն տեսակի հարթ և ուղղակ ապակիներ, նոյնպէս և գոհարանման և բիւրեղանման ապակիներ, սեղանի պիտոյքներ, ծաղկամաններ, սրուակներ, դեղավաճառատան անօթներ, լամպայի պիտոյքներ և լուսամտի ապակիներ, որ պատրաստում են բելգիական և ֆրանսիական եղանակով։

ԲՈԼՈՐՆ ԷԼ ՄԱՏՋԵԼԻ ԴՆԵՐՈՎ։ 2—3 (Հ)

ԿԵՐՕՍԻՆԻ ՊԱՀԵՍՏ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ

ԴԷՊՕ ԼԱՄՊԱՆԵՐԻ ՊԱՍՏԱՌՆԵՐԻ ԵՒ ՄԷԲԵԼԻ

Ե. Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆՑԻ

գտնվում է Վօկզալի մօտ, կասպեան-Սև-Ծովի նաւթարդիւնաբերական ընկերութեան պահեստում, նախկին կարտվելօվի

ԿԵՐՕՍԻՆԻ ԵՒ ՄԱԶՈՒՏԻ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԵԾ ՔԱՆԱԿՈՒԹԵԱՄԲ 8—25 (Հ)

ԲԱԳՈՒԻ „ԿԱՍՊԵԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԸ“ ընդունում է ամեն տեսակ գրքեր կոմիսիայով վաճառելու համար,

Հասցէն. БАКУ, „Каспійская Книжная Торговля“ Седраку Тараянцу. 10—15 (Հ)

ЗУБНЫЯ СРЕДСТВА А. ШТЕХЕРЪ
ПОДОЛЬСКІЯ ЗУБНЫЯ КАПЛИ КОРОБКА 50 и 80 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ КОКАИНОВЫЙ ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ БОЛЬШ. ФЛАКОНЪ 80 К.
ГИГІЕНИЧЕСКІЙ ЗУБН. ПОРОШОКЪ КОРОБКА 30 К.
СКЛАДЪ ВО ВСѢХЪ АПТЕКАХЪ и АПТЕК. МАГАЗ.

ՊՐՕՎԻԶՕՐ Ա. ՇՏԷԽԵՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՁԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՈԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 80 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՕՊ.
ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՑԻՆ ՓՈՇԻ 30 ԿՕՊ.

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ. ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ կովկասեան դեղավաճառատան, և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկօվսկու և Ադմուրօվի դեղատներում. ԲԱԳՈՒԻ մէջ՝ Բէկկերի մօտ, ՔՈՒԹԱՅԻՍՈՒՄ՝ կօկօչեվի մօտ, ՍՏԱՎՐՕՊՕԼՈՒՄ Բրօխնօցկու մօտ և ԵԿԱՏԵՐԻՆՕԴԱՐՈՒՄ։ (Հ.)

ՀԻՒՐԱՆՈՑՈՒՄ ՏԷԼԷՑՕՆ

ՀԷՄԵՑԿԱՅԱ ԳՕՍՏԻՆՆԻՑԱ

ՎԷ ՎԱՐՇԱՎԷ

31. Длугая улица 31.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՀԻՒՐԱՆՈՑ

ՎԱՐՇԱՎԱՅՈՒՄ, Դլուգայա փողոց, 31. Գտնվում է քաղաքի նոյնիսկ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ կենտրոնում, ԹԱՏՐՕՆՆԵՐԻ և բոլոր ՊԱՇՏՕՆԱՏԵՂԵՐԻ կողքին։

90 սենեակներ, շքեղ կերպով յարմարեցրած, 30 կոպէկից մինչև 3 բուբլի օրական վարձով։

ԿՕՆԴԻՏԷՐԻԱ և ՐԷՍՏՕՐԱՆ

ճաշեր 30 կոպէկից մինչև 1 բուբլի։

ՕՄՆԻԲՈՒՍՆԵՐ և ԿԱՌՔԵՐ երկաթուղու բոլոր գնացքների համար։

ԿԱՌՔԵՐԻ վարձելը չափաւոր գներով։ (Հ)

ԲԺՇԿԱՊԵՏ ԲԷՆԿԼԻՎՍԿԻ գիտիզօրսկ քաղաք գնալու պատճառով, այս մայիսի 15-ից այլ ևս հիւանդներին չէ ընդունում։ Գօլօվինսկի պրօսպէկտ, Բէլօի նախկին տուն, № 5։ 2—2

Дозволено цензурою, Тифлисъ 18 Мая 1888 г.

Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.